ՄԱԽՔ.	Ընթացք 1881 ամի. Ր.	Կ.
Դիւանական ծախուց համար տուած է.	24	61
Օտարական աղքատների բնակութեան տան վարձ է տուած.	10	
Տեղական 17 աղքատ ընտանիքի համար տուած է.	160	
Օտարական աղքատներին տուած է ճանապարհածախք.	40	
Աղքատանոցում բնակուող աղքատների համար եղած է ուտելիքի և վառելիքի ծախք.	25	29
Մէկ օտարականի թաղման համար եղած է ծախք.	3	30
Ընդամենն . .	263	20

ԴԱՆՈՒԹԻՒՆ. ա. Երկու հարիւր վաթսուն երեք բուբլ. քսան կոպէկ ծախքը 3326 բուբլ. 60 կոպէկ մուտքից հանելով մնայ առ 1-ն Յունվարի 1882 ամի պատրաստի գումար երեք հազար վաթսուն երեք բուբլ. քառասուն կոպէկ.

բ. 2755 բուբլ. ապառիկի մէջ հաշվումէ Նարաթեանցի 1400 բուբ. որը տարեկան 100 բուբ. տալով լրացնելու է 14 տարումը համաձայն իւր ստորագրութեան, և Յովհաննէս Իսահակեանցի 500 մանէթն, որ լրացնելու է տասը տարումը.

Նախագահ Ժողովոյն Աղաբէկ Քալանթարեան

Ղ. Ս. Յովհաննիսեան
Մկրտիչ Բ. Աթանասեան
Անդամք Յակոբ Լիսեան
Մարտիրոս Նաբաթեանց
Աղէքսանդր Իսահակեան
Առանձնագրիր Գ. Բաբայեան.

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐՄԱՆԻՑ.

Յորմէ հետէ պ. Ծերօն Աստուածատուրեան, այն ազգասէր և օգտակար հոգաբարձուն, բառերու բացարձակ նշանակութեամբ, 30 ամեայ այս պաշտօնատարը յակամայիցն ստիպուեցաւ ձեռք քաշել դպրոցէն, դպրոցի դրութիւնը օր քան զօր վատթարացաւ.

Նոր հոգաբարձուք հապճեպով ձեռնարկեցին յԱրարատ խմբագրեալ ծխական դպրոցաց այն ծրագիրը քննադատելով, դատափետել և անյարմար համարել զայն, որ շաբաթը միայն 6 դաս ուսներէն և 18 դաս հայերէն առարկաներու ժամանակացոյց մ' կը պարունակէ յինքեան. Ինչպէս ըսի, անյարմար դատեցին աս ժամանակացոյցը, և խմբագրեցին

իրենք նոր ժամանակացոյց, ճոխ ռուսերէն դասերով, նոր վարժապետի թելադրութեամբ և ձեռամբ։

Հայ մանկտին Ագբիրմանիս, որ ասկէ տարի ու կէս առաջ սկսած էր իրեն տաճկերէն դպրոցական լեզուն մոռնալ և հայերէնն ուսնիլ. գրականութեամբ և պատմութեամբն հանդերձ, այժմ փոխան հայերէնի, ուսմանց առարկայներն ամենն ռուսերէն են, և դպրոցական լեզուն դարձեալ տաճկերէն, այս անգամ խառն ընդ ռուսերէնի։ Կը տիրապետեն միայն սա լեզուներն այժմ այս տեղի հայ որդւոյն մտացն, սրտի և լեզուի վրայ, և երբէք հայերէն։ Հայոց լեզու, օրը միայն մէկ դաս։ Հետևաբար, օտարի ըշկօլի մ՝ ճիշտ տիպարը կը կրէ այժմ տեղւոյս ժողովրդական դպրոցը, քան հայկականի, և քան ծխական դպրոցի Հայոց։

Հոս ստիպուած ենք հոգոց հանել, և յարել թէ, հայ մանկտին իւր նուիրական լեզուն և պատմութիւն, ազգն ու հայրենիք ե՞րբ պիտի ուսանի, և որպիսի՞ դաստիարակի ձեռամբ և ներշնչութեամբ։

Զգայուն հայ սիրտն, մտաց և զգացմանցն այս փոքրիկներու հարստահարութեան հանդիսատես ըլլալէն յետոյ, ասոր տխուր եղրակացութեան ընականարար ծանօթանալով, կսկսի սգալ կսկծագին և դառնագին, տեսնելով թէ, հայ ապագայի յուսոյ այս թերթեր որ կը թոռմին, և լուսոյ կայծք, որք կաղօտանան այսպէս։

Բայց մեր մերձակայ հոգևոր կառավարութիւնը անտեղեակ կերևի յայսմ ամենայնի. և կը համարձակիմ ըսել նաև թէ, անզգայ։

Ինչպէս որ եղաւ անցեալ տարի, դպրոցական գործերէ առ այժմ քաշուած Ծերօն աղայի, քանի՞ցս և քանի՞ցս դպրոցին յեղաշրջութիւնը գուժօղ տեղեկութերթ նամակներուն նկատմամբ։

Հուսկ յետոյ, անցեալները, հայ որեարն Ագբիրմանիս իւր յետին ճգամբն և յուզմամբ ժողովրդեան մէջէն խումբ մ՝ երիտասարդաց ընտրեց 5 հոգի, և անուանեց աս հնգեակն «առ ժամանակեայ քննիչ յանձնաժողով»։ Որոց սիրտն իրենց առած հայ դաստիարակութեան չափէն աւելի զգայուն՝ ծանուցեալքն հասարակութենէն, հետևաբար ասոնց պաշտօնն պիտի ըլլար մերթ ընդ մերթ այցելելով դպրոցին, դպրոցի վիճակը հասկնալ և հասկցնել զայն, որում անկ էր։

Ուստի, իր ընտրութենէն երկու օր զկնի դպրոցը այցելել սկսաւ։ Եւ ահա մի քանի անգամ նորա վիճակը շոշափելէն յետոյ, իրենց ըրած տեղեկագիրներէն երկուքը կը ներկայեմ աստէն յընթերցանութիւն «Արարատ» Ամնագրիդ լուրջ ընթերցողացն։

Թ. Ս. ԱՐԾՐՈՒՆԻ.

Առայժմ Դեր. Մակար Արքեպիսկոպոսի ուշադրութեան կը-յանձնեմք կարգադրելոյ համար, որ բացի սահմանեալ առարկաներէն՝ միւս հանրակրթական բոլոր առարկայք եւ գիտելիք հայերէն լեզուով աւանդուին։ Ծ. Խաչ.